



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԳԱԿԵՏԱՐԱՆԻ

ԵՎ

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻԶԵՐՆԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ  
ՄԻԶԵՎ

ԱՊՈԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի Մարզպետարանը, ի դեմս մարզպետ պարոն Ռաֆիկ Գրիգորյանի մի կողմից և

Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը, ի դեմս Խորհրդի նախագահ պարոն Անդրե Վալլինիի մյուս կողմից, համաձայն 2013թ. հունիսի 28-ի մշտական հանձնաժողովի որոշման

այսուհետ Գեղարքունիքի մարզպետարանը և Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը

- Հաշվի առնելով Ֆրանսիայի և Հայաստանի Հանրապետությունների կառավարությունների միջև բարեկամական և համագործակցային կապերը և 1995թ. նոյեմբերի 4-ին Երևանում ստորագրված Հայաստանի Հանրապետության կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարության միջև մշակութային, գիտական և տեխնիկական համագործակցության վերաբերյալ համաձայնագիրը
- Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության միջև կնքված համագործակցության պայմանագրերը
- Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանության, տղամարդկանց և կանանց միջև իրավահավասարության սկզբունքները հարգելու երկու կողմերի պատրաստակամությունը
- Հաշվի առնելով այն հետաքրքրությունը կայուն զարգացման նկատմամբ, որը ենթադրում է ներկա և ապագա սերունդների միջև համաձայնություն և համերաշխություն, սոցիալական հավասարություն և արդարություն, տնտեսական զարգացում,

հարգանք շրջական միջավայրի նկատմամբ, մշակութային բազմազանություն, և որի ապացույցն է 2008թ. սպրիլի 18-ին Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհրդի ղեկարտամենտայ նիստում ստորագրված «Ապակենտրոնացված համագործակցությունը ի նպաստ կայուն զարգացման» խարտիան

- Հաշվի առնելով 2012թ. փետվարի 24-ին Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհրդի ղեկարտամենտայ նիստում «Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհրդի միջազգային հարաբերությունների և ապակենտրոնացված համագործակցության խարտիայի» ստորագրումը
- Հաշվի առնելով Ֆրանսիայի Հանրապետության տեղական խմբավորումների Գլխավոր օրենսգիրքը և մասնավորապես ապակենտրոնացված համագործակցությանը վերաբերող L.1112-1 և դրան հաջորդող հոդվածները
- Հաշվի առնելով ՀՀ կրթության և գիտության նախարարության և Ֆրանսիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջև 2011թ. մարտի 18-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատություններում ֆրանսերենի ուսուցման մասին համաձայնագիրը
- Հաշվի առնելով այն մշտական հետաքրքրությունը, որ ցուցաբերում է Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհուրդը Հայաստանի օգտին իրականացվող ծրագրերի և գործողությունների նկատմամբ
- Հաշվի առնելով Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհրդի նախաձեռնությունը համագործակցային կապեր հաստատել Հայաստանի և մասնավորապես Գեղարքունիքի մարզի հետ
- Հաշվի առնելով Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի ղեկարտամենտի Գլխավոր խորհրդի միջև հաստատված կապերը, և մասնավորապես 2004թ. հոկտեմբերի 2-ին կնքված համաձայնագիրը և 2010թ. հոկտեմբերի 9-ին կնքված համագործակցության պայմանագիրը

*Ինչպես նաև նախապես իրականացված ուսումնասիրություններն ու մտքերի փոխանակումը 2012 թ. հոկտեմբերին Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի կողմից Գեղարքունիքի մարզ և 2012թ. դեկտեմբերին Գեղարքունիքի մարզպետարանի կողմից Իզերի դեպարտամենտ կառարած այցերի ընթացքում*

**Ստորագրեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.**

**Հոդված 1 ՆՊԱՏԱԿՆԵՐԸ**

Գեղարքունիքի մարզպետարանը և Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը ցանկանում են սերտորեն համագործակցել՝ երկխոսությունը, փորձի և հմտությունների փոխանակումը զարգացնելու, ինչպես նաև սոցիալական և տնտեսական կայուն զարգացմանը նպաստելու համար: Սույն պայմանագիրը նպատակ ունի բարելավել Գեղարքունիքի մարզի հատկապես գյուղական համայնքների բնակիչների կենսամակարդակը, ինչպես նաև նպաստել երկու պետությունների միջև միջազգային համերաշխության ամրապլտմանը :

**Հոդված 2 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ**

Սույն պայմանագրում ամրագրված համագործակցության առանցքները վերաբերում են հետևյալ բնագավառներին.

- Տուրիզմը՝ որպես տեղի կայուն զարգացման և մշակութային ու ավանդական ժառանգության արժևորման կարևոր գործոն
- Ֆրանսերենի ուսուցում և ֆրանսախոսության զարգացում Գեղարքունիքի մարզում
- Մշակութային փորձի փոխանակում Իզերի և Գեղարքունիքի միջև
- Առողջապահական ոլորտի բարելավում և բուժօգնության հասանելիություն

- Փորձի փոխանակում Բզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև ինտախոուցիոնալ մակարդակով
- Ցանկացած այլ բնագավառ, որը կարող է հետագայում զարգացման հավանականություն ունենալ, առանձին կրճատարկվի այս պայմանագիրը ստորագրողների կողմից

Համագործակցությունը կիրականացվի երկրներից յուրաքանչյուրում գործող օրենքների սահմաններում :

**Հոդված 3 ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆԱՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱՌԱԿԱՆ ՉԱՓԸ**

**3-1 Նախատեսվող ծրագրերը**

Սույն պայմանագրի շրջանակներում համագործակցության նպատակներն իրականացանելու համար երկու կողմերը պարտավորվում են համաձայնեցնել իրենց գործողությունները Հոդված 2-ում նշված բնագավառներում :

- Տուրիզմը՝ որպես տեղի կայուն զարգացման և մշակութային և ավանդական ժառանգության արժևորման կարևոր գործոն
  - o Ցանցի ստեղծում և տուրիզմի բնագավառի համակարգում
  - o Նախապես որոշված հայկական տարածքներում տուրիզմի բնագավառի կոմունիկացիայի և գովազդման խթանում
- Ֆրաներենի ուսուցում և ֆրանսախոսության զարգացում Գեղարքունիքի մարզում
  - o Ֆրանսերեն լեզվի ինտենսիվ դասընթացներ դպրոցականների և մեծահասակների համար
  - o Ֆրանսերեն լեզվի արժևորում Գեղարքունիքի մարզում
- Մշակութային կապերի զարգացում Բզերի և Գեղարքունիքի միջև
  - o Աջակցություն մարզում կազմակերպվող ֆրանսախոս մշակութային միջոցառումներին

- Աջակցություն Իզերում Հայաստանի հետ կապված մշակութային միջոցառումներին՝ տեղի հայ համայնքի հետ համատեղ
- Առողջապահական ոլորտի բարելավում և բուժօգնության հասանելիություն
  - Տարածաշրջանում արկա բուժհաստատությունների, մասնավորապես Գավառի պոլիկլինիկայի և գյուղական ամբուլատորիաների որակական բարելավում(վերանորոգում և կահավորում),
  - Վերապատրաստումներ և փորձի փոխանակում Գեղարքունիքի մարզի մակարդակով
- Փորձի փոխանակում Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև
  - Աջակցություն Գեղարքունիքի մարզպետարանին ինտիտուցիոնալ մակարդակով՝ վերապատրաստումներ և հմտությունների ամրապնդում
  - Փորձի և հմտությունների փոխանակում սոցիալական ծրագրերի բնագավառում Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի և Գեղարքունիքի մարզպետարանի միջև

**3-2 Անհրաժեշտ ֆինանսական միջոցներ**

Համագործակցության այս ծրագրի նախնական արժեքն է 423 000 €, որից 386 000 € կվճարի Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը, իսկ 37 000 €՝ Գեղարքունիքի մարզպետարանը (տես հավելված 1): Կլինեն նաև համաֆինանսավորման այլ աղբյուրներ :

**Հոդված 4 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Տարբեր կառույցներ (Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի բաժիններ, ՀԿ-ներ, ընկերություններ, ասոցիացիաներ,

ապակենտրոնացված կառույցներ և այլն) կմասնակցեն սույն պայմանագրում ամրագրված ծրագրերի իրականացմանը :

### **Հոդված 5 ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

Հանձնախումբը ժողով կիրավիրի ամեն տարի: Այն կկազմի աշխատանքային ծրագիրը, կորոշի դրանց իրականացման պայմանները, կգնահատի վերջիններիս իրականացման հնարավորությունները :

Գեղարքունիքի մարզպետարանի և Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդի մասնագետներից կազմված վերահսկող կոմիտեն կնախապատրաստի կառավարման խորհրդի որոշումները : Այն ժողով կիրավիրի առնվազն տարեկան մեկ անգամ և նախապայմաններ կապահովի հանձնախմբի աշխատանքի համար :

Այս խորհուրդների քարտուղարությունը կստանձնի հրավիրող խմբավորումը :

### **Հոդված 6 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **6-1 Գեղարքունիքի մարզպետարան**

Գեղարքունիքի մարզպետարանը կնպաստի վերոնշյալ ծրագրերի իրականացմանը և կարող է ներգրավել ֆինանսական միջոցներ Հայաստանի Հանրապետության կամ այլ միջազգային կազմակերպությունների կողմից՝ Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհրդին տեղյակ պահելուց հետո :

Գեղարքունիքի մարզպետարանը Գլխավոր խորհրդին կներկայացնի ծրագրերին, ինչպես նաև դրանց պլանավորմանը վերաբերող բոլոր փաստաթղթերը, որոնց հիման վրա կիրականացվի երկու կողմերի համագործակցությունը :

Գեղարքունիքի մարզպետարանը կմասնակցի այն ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք ներկայացված կլինեն Իզերի դեպարտամենտի հետ համագործակցության տարեկան ծրագրում և կներկայացնի տարեկան հաշվետվություն :

## **6-2 Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդ**

Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը կմասնակցի Գեղարքունիքի մարզպետարանի հետ համագործակցության շրջանակներում իրականացվող ծրագրերի իրականացմանը և կարող է ներգրավել ֆինանսական միջոցներ Ֆրանսիայի Հանրապետության և/կամ Եվրամիության կողմից՝ վերջիններիս մասին Գեղարքունիքի մարզպետարանին տեղյակ պահելուց հետո :

Ֆրանսիական կողմի բոլոր այցելությունները կպլանավորվեն և կհամաձայնեցվեն Գեղարքունիքի մարզպետարանի հետ :

## **6-3 Անվտանգությունը**

Հայաստանի իշխանությունները կերաշխավորեն Իզերի դեպարտամենտի բարձրաստիճան պաշտոնյաների և տեղում աշխատող մասնագետների կյանքի և ունեցվածքի անվտանգությունը :

Իզերի դեպարտամենտի Գլխավոր խորհուրդը կհետևի, որպեսզի Իզերի օպերատորները հարգեն հայկական իշխանությունների կողմից հաստատված կանոնները :

## **Հոդված 7 ՊԱՏՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՀԱՐԱՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **7-1 Տևողությունը**

Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում աստրագրման պահից և գործում է մինչ 2015թ.-ի դեկտեմբերի 31-ը :

### **7-2 Վեճերի լուծման կարգը**


Սույն պայմանագրի կիրառումից կամ իրականացումից առաջացած ցանկացած տարաձայնություն կլուծվի երկու կողմերի միջև բանակցությունների միջոցով :

Անհամաձայնության կամ պարտավորությունները չկատարելու դեպքում կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է այդ մասին տեղյակ պահել առնվազն 6(վեց) ամիս առաջ :

**Հոդված 8. ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Սույն պայմանագրի պայմանների և իրականացման ձևերի ոչ բովանդակային փոփոխությունների դեպքում կողմերի միջև կկնքվի համաձայնագիր: Վերջինումս կամրազրվեն փոփոխման ենթակա տարրերը՝ առանց պայմագրի նպատակների փոփոխության պատճառ հանդիսանալու:

Հայաստանի Հանրապետության  
Գեղարքունիքի մարզպետարան

  
Մարգարիտ  
Ռաֆիկ Գրգորյան

Ֆրանսիայի Հանրապետության  
Իզերի դեպարտամենտի Գլխավոր  
խորհուրդ

  
Նախագահ  
Անդրե Վալլիեի